

ԳԻՒՂԻՆ ՄԱՏՈՒՈՐԸ

Լեբան գագաթ, ժայռի մը վրայ առանձին,
Մատուռ մը կայ հնադարեան, կիսալոյս,
Ուր սուրբերու ստուերները կը յածին,
Երբ ազօթֆի հնչէ ժամը Անժէլիս:

Սեւեր հագած՝ գիւղին կիներն լեռնէն վեր
Կը բարձրանան ուրուատեսիլ գնացով,
Եւ երկիւղած՝ կը քարանձանները,
Սրբավայրին դրան առջեւ, փոփոկով:

Պատէն առկախ՝ մամուռներով օղակուած,
Մատոննա մը կը ժըպտի հոն գորովոտ
Նայուած փոքր Աստուածամօր երկնայած,
Որուն դիմաց անոնք ամէն առաւօտ,

Անբոսառիկ ակնարկներով երկնադէտ,
Ի ծունր կու գան ընծաներով մեծագին,
Եւ կը վառեն կերոններու խորձին հետ՝
Ազօթալոյս ջահը իրենց հաւատքին:

Այդ մատուռին երբեմն ես ալ կը տանիմ,
Կիրակմուտի «Լոյս գուարթ»ով խնկարկուած
Հաւատարոց ըզձանքները մտերիմ,
Իմ հեռաւոր մանկութեանը՝ առ Աստուած...:

ՀՄԱՑ ԵԱԿ ԳՐԱՆԵԱՆ

